ԵԳԻՊՏԱԿԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ-ՄՇԱԿՈՒՅԹ ԿԱՊԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գոհար Սարգսյան

Եգիպտական մշակույթի հանդեպ հետաքրքրությունը ծագել է շատ հնում: Եգիպտոսի մասին առաջին արժեքավոր տեղեկությունները հաղորդում են հունա-հռոմեական պատմիչներն ու աշխարհագետները՝ Հերոդոտը, Դիոդոր Սիկիլիացին, Ստրաբոնը, Պլուտարքոսը: Նրանք ճանապարհորդել են Հին Եգիպտոսում, նկարագրել տեղական հավատալիքներն ու կրոնական սովորույթները, ժողովրդական բարքերն ու կենցաղը և, ընդհանրապես, աշխարհայացքը, որի առանցքը կազմել են տիեզերածնության և մարդաբանության հարցերը: Պահպանված վավերագրերը թույլ են տալիս պնդել, որ եգիպտական կրոնի կենտրոնական հիմնահարցերից մեկը կյանքի արժևորումն է, կյանքի և անմահության փոխհարաբերությունն ընդհանրապես: Պետք է նկատել, որ եգիպտական մշակույթի և կրոնական պատկերացումների ձևավորման գործում չափազանց մեծ է Եգիպտոսի աշխարհագրական միջավայրի՝ բուսական ու կենդանական աշխարհի ազդեցությունը, որը զգացվել է Նեղոսի հովտի հնագույն բնակիչների հոգևոր ու հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և ընկած է համապատասխան կրոնական պատկերացումների հիմքում[1]: Եգիպտական մշակույթի, այդ թվում և կրոնի ձևավորումը, զարգացումն ու անկումը, շարունակում են մնալ գիտական մտքի և քաղաքակրթության պատմությամբ զբաղվող մասնագետների ուշադրության կենտրոնում:

Եգիպտական կրոնը բարդ երևույթ է: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի պատմական հուշարձանները փաստում են, որ այն գոյատևել է շուրջ 3,5 հազարամյակ: Այլ կերպ ասած՝ այն ոչ միայն ժամանակագրական, այլ պատմական զարգացում ապրած բազմակողմանի երևույթ է,

---

Հոդվածը ներկայացվել է 01.03.2019 թ., գրախոսվել է 02.04.2019 թ., ընդունվել է տպագրության 21.06.2019 է.:

[1] Եգիպտական դիցարանի և Եգիպտոսի աշխարհագրական միջավայրի սերտ կապի մասին մանրամասն տե՛ս **Франкфорт Г., Франкфорт Г. А., Уилсон Дж., Якобсен Т.,** В преддверии философии, М., 1984, ст. 45-55:

որի համակարգում միմյանց են խաչավորվում բնապաշտական հավատալիքները (ֆետիշիզմ, տոտեմիզմ, մոգություն), բազմաստվածությունը ու միաստվածային մտածողության տարրերը, թեոգոնիայի, կոսմոգոնիայի, փարավոնի պաշտամունքի բավականին զարգացած պատկերացումները և հանդերձյալ կյանքի վերաբերյալ միմյանց հակասող բազմաբնույթ առասպելներն ու կրոնադիցաբանական զրույցները: Եգիպտական դիցաբանության արխայիկ հավատալիքները աչքի են ընկնում ընդգծված տոտեմիստական պատկերացումներով: Արխայիկ պաշտամունքային համակարգում, օրինակ, ոչխարը համարվել է **Խնում** աստծու ստեղծագործական ուժի, կովը՝ գեղեցկության և սիրո աստվածուհի **Հաթհորի** մարմնավորումը, **Ապիս-ցուլը** համարվել է Մեմֆիսի գլխավոր աստված **Փթահի** «հոգին ու պատգամախոսը», Մնեմիս-ցուլը՝ արեգակնային Ռա աստծու մարմնավորումը, իսկ Բուհիս-ցուլը Հերմոնտիսում համարվել է տեղական աստծու կենդանի պատկերը[1]:

Եգիպտական քաղաքակրթությունն ու կրոնը պատմական նշանակալից և ազդեցիկ դեր են ունեցել ինչպես հունական դիցաբանության, այնպես էլ փիլիսոփայության վրա: Պլուտարքոսի վկայությամբ՝ Միլետյան դպրոցի հիմնադիր Թալեսը եգիպտացիներից է ընդօրինակել ամեն բանի նախահիմքը ջուրը համարելը: Սոլոնը, Պլատոնը, Անաքսիմանդրը, Դեմոկրիտը ևս արժեքավոր գիտելիքներ են ձեռք բերել իրենց ուսուցիչ եգիպտական քրմերից: Դիոդորը վկայում է, որ Պյութագորասը ևս բավականին երկար ժամանակ իմաստնացել է Միջագետքում և Եգիպտոսում: Եգիպտոսում էլ նա սովորել է սրբազան խոսքի, երկրաչափական թեորեմների և թվերի մասին ուսմունքը:

Եգիպտացիների կրոնական և բնագիտական պատկերացումները մեծ ազդեցություն են ունեցել նաև Ալեքսանդրիայի գիտական մտքի զարգացման վրա:

Մ. թ. ա. IV հազարամյակում Եգիպտոսը դառնում է քաղաքակրթության և հոգևոր ու հասարակական մտքի առաջին օրրաններից մեկը:

Եգիպտական քրմական դասի ջանքերով հիմք է դրվում նախկինում չտեսնված քաղաքակրթության, թռիչք է ապրում բնագիտական միտքը,

---

[1] Տե՛ս **История Древнего мира,** М., 1989, ст. 292-293; **Мифология** (Большой энциклопедический словарь), М., 1998, ст. 453, 586, 592; **Мифы народов мира** (энциклопедия), т. 1, М., 1987, ст. 92; Т. 2, М., 1988, ст. 345-346, 584-585, 593:

որն այսօր էլ զարմացնում է իր խորությամբ ու զարմանալի ճշգրտությամբ: Գիտությունը դառնում է քրմական դասի սրբազան գործը, որն, իհարկե, խորապես ներթափանցված էր կրոնադիցաբանական աշխարհայացքով: Միջին թագավորության շրջանից մեզ են հասել բժշկական տեքստեր՝ Էբերտի պապիրուսը (20,5 մ երկարությամբ), ուր արձանագրված են 900 դեղատոմսեր, տրված են զանազան հիվանդությունների նկարագրություններ, որոնց պատճառը համարվում է արյունատար անոթների փոփոխությունը: Նոր թագավորության շրջանից պահպանվել են հանքավայրերի աշխարհագրական քարտեզներ, հայտնաբերվել է ջրային ժամացույց: Նոր թագավորության շրջանում Ամենեմոպի կողմից կազմվում է մի յուրահատուկ բառարան, որն անկասկած մի ինքնատիպ հանրագիտարան է: Պահպանվել են բազմաթիվ «մաթեմատիկական պապիրուսներ», որոնք ապացուցում են, որ եգիպտացիները առաջիններն են, որոնք հիմք են դրել և օգտագործել են հաշվարկման տասական համակարգը, գործողություններ են կատարել կոտորակներով, հայտնագործել և կիրառել են թվաբանական և երկրաչափական պրոգրեսիաները, ճշգրիտ կերպով ձևակերպել եռանկյունու, շրջանի մակերեսների, հատած բուրգի ծավալի որոշման և այլ բանաձևեր: Մ.թ.ա. III դարից սկսած՝ հելլենականության ազդեցությամբ, ինչպես նաև ներքին և արտաքին այլ ազդեցությունների հետևանքով Եգիպտոսի մայրաքաղաք և հոգևոր-մշակութային կենտրոն Ալեքսանդրիայի գերագույն աստծու արժեք է ձեռք բերել հելլենական ծագում ունեցող Սերապիսը, որի խորհրդանիշները նույնացվել են Օսիրիսի և Ապիսի հետ[1]:

Հին հույները ոչ առանց հիմքի Եգիպտոսը համարել են «Նեղոսի պարգևը»: Եվ իրավամբ Նեղոսը եգիպտական քաղաքակրթության ու մշակույթի յուրահատուկ խթանն է: Գարնան անձրևներից Նեղոսը վարարում էր և աղետներից խուսափելու համար պետք էր ջրանցքներ փորել ու կառուցել պատնեշներ: Հեղեղը երբեմն ոչնչացնում էր բոլոր արգելքները և եգիպտացիներին հարկադրում էր զբաղվել չափագիտությամբ: Իսկ այդ ամենը խթանում և զարգացնում էր չափելու և հաշվելու արվեստը, որն անխուսափելի էր առանց երկնային մարմինների շարժման դիտարկման: Նեղոսի (Խապի) վարարումը համընկնում էր Սիրիուս աստղի ծագմանը: Այդ օրինաչափության հայտնագործմամբ եգիպտա-

[1] Այս մասին տե՛ս **Мифология** (Большой энциклопедический словарь), М., 1998, ст. 495; **Мифы народов мира** (энциклопедия), т. 2, М., 1988, ст. 427:

ցիները դարձան աստղագիտության հիմնադիրներն ու առաջին համակարգողները: Իսկ ննջեցյալներին զմռսելը ուղղակի կապված էր հետմահու կյանքի պատկերացումների հետ և հիմք էր դառնում վիրաբուժական փորձի կուտակման համար:

Հին եգիպտական քաղաքակրթության ականավոր նվաճումներից մեկը աշխարհում առաջին անգամ կիրառվող գրի ստեղծումն է, որն այստեղ ապրել է փուլային յուրահատուկ զարգացում: Շուրջ 3,5 հազարամյակ օգտագործվել է հիերոգլիֆային գիրը: Դրանից բացի՝ եգիպտացիները օգտագործել են նաև գրի այլ ձևեր: Հին թագավորական շրջանում հանդես է եկել հիերատիկ գիրը, որը կիրառվել է որպես ճեպագիր՝ պապիրուսի, կավի կամ զանազան գործվածքների վրա: Հիերատիկ նշանները ծագել են հիերոգլիֆներից և կապակցվել են նրանց: Եգիպտական գրերի մի այլ տեսակ է դեմոտիկ գիրը, որը զարգացել է մ.թ.ա. IX դարում: Այն նշանավորվում է ձայնավորների կիրառման միտումով, թեև շատ նշագրեր բազմիմաստ են: Եգիպտական գրի զարգացման վերջին փուլը ղպական լեզուն է (III - IV դդ. մ. թ.), որով խոսել են հին եգիպտացիների այն քրիստոնյա հետնորդները, որոնք լիովին յուրացրել էին հունարեն լեզուն:

Իհարկե, պետք է հաշվի առնել և այն, որ այդ ամենը (այդ թվում և գրերը) ունեցել է կաստայական բնույթ և կիրառվել է միայն քրմական նեղ շրջապատում: Գրի կարևորությունն է ապացուցում նաև այն փաստը, որ Եգիպտոսում գրի աստվածություն է առանձնացվել. եգիպտական դիցաբանական համակարգում մեծ ճանաչում ունեցող **Իբիս** թռչունը համարվել է իմաստության, գիտելիքի, գրի, նաև լուսնի հովանավոր աստվածը, աստվածների քարտուղարը և երկնային դատավորի՝ **Թոթ** աստծու կենդանակերպը: Նրա պաշտամունքի հետ է կապվել նաև աստծու խոսքի՝ տառերի հայտնագործումը[1]: Սակայն նկատենք, որ արդեն անտիկ շրջանում հին եգիպտական գրերը չէին կիրառվում: Այդ են վկայում նաև այդ և հետագա ժամանակաշրջանների բազմաթիվ պատմիչներ ու աշխարհագետներ, որոնք Եգիպտոսում շրջելիս տաճարների պատերին տեսել են գրեր և փորձել վերծանել դրանք: Իր ժամանակին այդ

---

[1] Մանրամասն տե՛ս **Мифология** (Большой энциклопедический словарь), М., 1998, ст. 49-50, 257-258, 418-419, 459, 461, 495; **Мифы народов мира** (энциклопедия), т. 1, М., 1987, ст. 89, 568-570:

հարցերով զբաղվել է նաև եկեղեցական ականավոր գործիչ Կղեմես Ալեքսանդրացին, որը եգիպտական հնագույն գրերը դասակարգել է երեք հիմնական խմբի: Այդ հարցում զգալի ավանդ է ունեցել նաև XVII դ. նշանավոր ճիզվիտ գիտնական Աթանաս Կիրխերը, որը զուգահեռաբար ուսումնասիրել է նաև չինարեն, հայերեն լեզուները:

1822 թ. ֆրանսիացի բանասեր Ժան Ֆրանսուա Շամպոլյոնը վերծանեց Ռոզեթյան եռալեզու արձանագրությունը և գտավ հիերոգլիֆները կարդալու բանալին:

Նրա բազմաթիվ հետևորդները տարբեր երկրներում շարունակեցին ուսումնասիրել եգիպտական գիրն ու քերականությունը և նոր ուղղումներ ու լրացումներ մտցրին Շամպոլյոնի հայտնագործության մեջ (Ռիխարդ Լեպսիոս):

Մեզ հասած հնագույն եգիպտական գրական ստեղծագործությունները տանում են դեպի հազարամյակների խորքը՝ ժողովրդական բանահյուսության շրջան: Դրանցից շատերը վերաբերում են հին թագավորության շրջանին: Այդ շարքի նշանավոր ստեղծագործություններից է Մեմֆիսի աստվածաբանական-փիլիսոփայական տրակտատը (մ. թ. ա. III հազարամյակ), որը բովանդակում է հնագույն դրամատիկական-կրոնական պատկերացումներ, ավելի ճիշտ՝ Մեմֆիսի տաճարի միստերիաները: Նրանում պատմվում է Եգիպտոսը Հորուսի և Սեթի միջև բաժանելու և Օսիրիսի մահվան մասին դիցաբանական զրույցը: Ձեռագիրը բովանդակում է փիլիսոփայական-աստվածաբանական բարդ հիմնահարցեր և պատասխանում է աշխարհակառույցի հիմնական հարցին՝ առաջ քաշելով ու հիմնավորելով աշխարհաստեղծման մի յուրահատուկ ուսմունք: Ձեռագրից պարզ է դառնում, որ Մեմֆիսյան քրմերի դպրոցը զարգացնում էր այն տեսակետը, որ Մեմֆիսի գլխավոր աստված **Փտահը** տիեզերքն ստեղծել է իր մտքով և իր խոսքերով: Ձեռագրում հստակորեն ընդգծված է այն պատկերացումը, որ աշխարհակառույցի հիմքում ընկած է միտքը (խոսքը): Ձեռագիրը պարունակում է նաև Թեոգոնիայի հետաքրքիր գաղափարներ: Մասնավորապես փորձ է արվում հիմնավորելու, որ մնացյալ աստվածները, այդ թվում և Հելիոպոլսի արևի աստված **Ռա-Ատումը**, Փտահի էության տարբեր դրսևորումներն են, ավելի ճիշտ՝ «օրգանները»: Ձեռագրում հիմնավորվում է այն կոնցեպցիան, որ մարդկային մտքին «նյութ են տալիս» զգայարանները, միտքը բխեցնում է դատողություններ, իսկ խոսքն իրականություն է դարձնում հիմնականը,

նյութականացնում է իմացականը: Այստեղ արդեն առկա է կրոնական աշխարհընկալման հիմնատարրերից մեկը. աշխարհակառույցի նախահիմքը համարվում է միտքը, հոգևոր սկիզբը: Տրամագծորեն հակադիր մեկնակետ էին առաջադրում Հելիոպոլսի քրմերը: Ըստ Հելիոպոլսի Էննեադայի՝ «աստվածությունների իննյակի» ուսմունքի՝ աշխարհակառույցի նախահիմք կամ առաջնահիմք էր համարվում **Նունը**՝ նախնական ջուրը: Գերբնական այդ նախատարրն էլ հանդիսանում է թեոգոնիայի պատճառը: Նախապես Նունը ծնում է **Ռա-Ատումին**, իր հերթին սա ծնում է **Շուին** և **Թեֆնուտրին**: Աստվածածին այդ երկյակը գոյավորում են **Գեբին** և **Նուտին**, իսկ վերջիններս ծնում են աստվածային երկու զույգեր՝ **Օսիրիս-Իսիդային** և **Սեթ-Նեֆտիդային**: «Էննեադան» բովանդակում է նաև բավականին հետաքրքիր բնափիլիսոփայական աշխարհայացք: Դա խիստ օրինաչափ է, քանի որ կրոնը եղել է Եգիպտոսի հասարակական կյանքի կենտրոնը և վիթխարի կազմակերպչական դեր է կատարել ինչպես տնտեսական, այնպես էլ հասարակական ու քաղաքական կյանքում՝ մեծապես նպաստելով ընդհանուր պետության ամրապնդմանն ու հզորացմանը: Այլ կերպ ասած՝ եգիպտական մշակույթն ու գիտությունը ծառայել են կրոնական նպատակներին: Ուզում ենք մատնանշել նաև այն իրողությունը, որ աշխարհակառույցի եգիպտական պատկերացումները ձևավորվել են դիցաբանական համակարգերը բնութագրող այնպիսի ընդհանրական օրինաչափությունների հիման վրա, ինչպիսիք են դիտարկումից բացատրության անցումը, շրջապատող նյութական աշխարհը երևակայական գաղափարներով մեկնաբանելու ձգտումը[1]:

Ըստ էության՝ նույն նպատակին է ծառայել նաև բավականին զարգացած եգիպտական արվեստը: Դեռևս Պլատոնը, որն աստծուն բնութագրում էր իբրև կատարյալ բանականություն[2], իր ժամանակին պնդում էր, որ կրոնի հետ ունեցած անխզելի կապի պատճառով եգիպտական արվեստագետներն իրենց ստեղծագործություններում իրավունք չունեին արտահայտելու կրոնին հակադիր որևէ բան:

Աննախադեպ զարգացման էր հասել եգիպտական կիրառական ար-

---

[1] Այդ մոտեցման մանրամասները տե՛ս **Ильин В. В., Кармин А. С., Носович Н. В.,** Религиоведение, СПБ., 2008, ст. 14.

[2] Տե՛ս **Платон,** Софист /Сочинения в трех томах, т. 2, М., 1970, ст. 386:

վեստը: Եգիպտական նկարիչների այս տիպի ստեղծագործություններում ապշեցուցիչ ճշտությամբ պատկերված են կենդանիները, բույսերը, առարկաներն ու մարդիկ: Մարդու գեղարվեստական պատկերման եգիպտական ձևը (լինի դիմային, թե ֆրոնտալ) հազարամյակներ անց անգամ պահպանել է իր գեղարվեստական արժեքը: Չափազանց զարգացած են եղել նաև որմնանկարչությունը, հարթաքանդակն ու արվեստի այլ ձևեր, որոնք գերազանցապես կիրառվել են կրոնական կենտրոնների ու հարակից կառույցների զարդարման համար: Պահպանված եգիպտական տաճարներն այսօր էլ հիացնում են բարդ ու բազմաբնույթ հարթաքանդակներով և իրենց մոնումենտալ տեսքով: Հին Եգիպտոսում քանդակագործները կոչվել են «սանխ», որը բառացի նշանակում է «կյանքի արարիչ»: Քանդակների հիմնական նպատակը ևս կրոնական գաղափարի ընդգծումն է, մարդու երկվորյակի՝ **Կա**-ի պատկերումը, որը, որպես կանոն, վեհ, հանգիստ և դեպի հավերժություն ուղղված հայացքով նայում է դիտորդին: Եգիպտական ճարտարապետությունը (հին թագավորության բուրգեր, արևին նվիրված տաճարներ և այլն) այսօր էլ աննախադեպ է իր մոնումենտալությամբ և հոյակերտությամբ: Նույնը կարելի է ասել նաև քանդակագործության վերաբերյալ, որի գոհարներից է Կադելի ճակատամարտի ողջ ընթացքը պատկերող հարթաքանդակը:

Եգիպտացիների համար գեղեցկությունը խորհրդանշում էր հավերժ երիտասարդությունը: Դրա արտահայտությունը դեռ սկզբնական շրջանից սարկոֆագի (քնատապան) գլխամասին մարդկային դեմքի պատկերումն է: Ավելի ուշ շրջանում եգիպտական վարպետները ննջեցյալի դեմքին դնում էին կտավից կամ ոսկուց պատրաստված «թաղման դիմակ», որի վրա արտապատկերված դեմքն իր ընդհանուր արտահայտությամբ և «դասական հանգստությամբ» հիշեցնում է լուսանկարչական կենդանի հայացք, ռեալիստական և անհատական դիմանկար, և հենց դա պետք է ապահովեր ննջեցյալի հետագա կյանքը. «Լեռները, ժայռերը և քարերը իրենց անխախտությամբ մարմնավորում են երկարատևությունը, հավերժությունը: Երբ մարդու մարմինը քայքայվում է, մնում է քարի վրա արված պատկերը, իսկ մահացածի փորագրված անունը կդառնա նրա հետագա կյանքի երաշխիքը»[1]:

Անդրշիրիմյան կյանքի մասին հավատքային համակարգ ստեղծած

[1] **История религии,** т. 1, под ред. И. Н. Яблокова, М., 2002, ст. 117.

եգիպտացիները «հետագա կյանքն» ապահովելու նպատակով ննջեցյալի հետ դնում էին հազվագյուտ գեղեցկությամբ իրեր, որոնք արվեստի կատարյալ ստեղծագործություններ էին՝ պատրաստված ոսկուց և թանկարժեք քարերից, որոնք խորհրդանշում էին արևի փայլը, իսկ ազնիվ մետաղը մարմինը պաշտպանում էր քայքայվելուց: Գերեզմաններում և մումիաների վրա սփռվում էին բազմաթիվ առարկաներ՝ իբրև թալիսմաններ: Հանդերձյալ կյանքն էլ դեռ վերջը չէր, և մարդը պետք է հնարավորություն ունենար նորից կենդանանալու: Այդ մասին իրավացիորեն նշվում է, որ «ինչպես ցանքի տոնին Օսիրիսի՝ հացահատիկով ողողված պատկերները հողի մեջ թաղելը նպատակ ուներ արագացնելու ծիլերի աճը, այդպես էլ գերեզմանում համանման պատկերի թաղումը անկասկած նպատակ ուներ կենդանացնելու մեռածներին, այլ կերպ ասած՝ ապահովելու նրանց հոգու անմահությունը»[1]:

Հնագիտական, ազգագրական և դիցաբանական շերտերի արդի ուսումնասիրություններով հաստատված է, որ նախնական բոլոր ազգերը, այդ թվում և եգիպտացիները, մարդկային կյանքը համարում էին «ինքնորոշող էություն», «յուրահատուկ ոգի» կամ «շունչ», որը՝ որպես «ինքնուրույն սուբստանց», կարող էր «դուրս սայթաքել» և «լողալով հեռանալ մարմնից»: Այստեղից էլ ծնվում է դիցաբանական այն համոզմունքը, որ «պետք է հոգին ամրացնել մարմնին»: Այդ պատկերացումներն էլ ընկած են թալիսմանների հանգուցային ձևի, զանազան փաթաթանների, ոտքի, ձեռքի, կրծքի լայն ու նեղ զարդերի և այլնի առաջ գալու հիմքում, որոնք, ըստ նախնիների պատկերացումների, պետք է պահպանեին մարմնի մասերի կապը կյանքի հետ և, հետևաբար, խոչընդոտեին, որ «ոգին (հոգին) լքի մարմինը»:

Եգիպտական ճարտարապետական հուշարձանները հնարավորություն են տալիս հետևելու այս ժողովրդի զարգացմանը՝ վաղնջական ժամանակներից (քարե դար) մինչև պատմական դարաշրջանը: Եգիպտական մշակույթի զարգացումը հստակորեն ուրվագծում է բնապատմական զարգացման այն ուղին, որը մարդն ինքն է հարթել իր համար բնական (ժայռախոռոչ) և անապատի կոպիտ գերեզմաններից մինչև մոնումենտալ, վեհաշուք և հարատև կառույցների՝ տաճարների և պալատների ստեղծումը: Այդ առումով չափազանց հետաքրքրական են «մեմֆիսյան

---

[1] **Ֆրեզեր Ջ.,** Ոսկե ճյուղը, Եր., 1989, էջ 443:

գերեզմաններ» համարվող բուրգերը՝ քարե խորանարդները: Քարե խոշորամասշտաբ այդ կոթողները, որպես կանոն, վերասլաց են. իրենց ծանրությամբ ու հզորությամբ խոյանում են դեպի հավիտենական երկինք: Մյուս կողմից, բուրգերը փարավոնների հոգու կացարաններն էին և խորհրդանշում էին փարավոնի՝ «աստվածամարդու» հզորությունն ու իշխանությունը. «Փարավոնը հաճախ նույնացվում էր պտղաբերության աստված Օսիրիսի հետ՝ դառնալով երկրի պտղաբերության մոգական կենտրոնը: Ահա թե ինչու նա պարտադիր պետք է մասնակցեր երկրագործական բնույթի բոլոր ծեսերին»[1]:

Եգիպտական բուրգերի իրական իմաստը ընկալելի կարող է լինել միայն այն պարագայում, երբ դրանց ուսումնասիրության հիմքում դրվեն եգիպտական կրոնական հայացքների յուրահատկությունները և հատկապես այն համոզմունքը, որ մարդը մահվանից հետո իր կյանքի ուղին շարունակում է «անմահության թագավորությունում»: Իսկ դրանից միանգամայն օրինաչափորեն կարելի է եզրակացել, որ Եգիպտոսում ճարտարապետությունը բուռն զարգացում է ապրել՝ ուղղակիորե կապված լինելով կրոնական պատկերացումներին և կոչված է եղել բավարարելու որոշակի կրոնական պահանջմունքներ: Այսպես են սկզբնավորվել դասական ճարտարապետության տիպերն ու դրանց զանազան տարրերը (բուրգ, օբելիսկ, սյուն, պիլոն և այլն): Ինչ վերաբերում է հոգևոր կոթողերին՝ տաճարներին, ապա դրանք հրապարակ են իջել աստվածների հզորությունը ցույց տալու համար: Դրանց շարքում իրենց կատարելությամբ աչքի են ընկնում հատկապես Կառնակի և Լուքսորի հոյակոթող տաճարները: Հիշատակումներում նշվում է, որ Կառնակի տաճարի ճարտարապետը եղել է Ինենին: Կոթողը նվիրված է Թեբեի գլխավոր **Ամոն-Ռա** աստծուն: Տաճարի սյունասրահը աշխարհում պահպանված նույնատիպ կոթողներից մեծագույնն է: Այդ սյունաշարը (16 շարք և 134 սյուն) ամենից առաջ աչքի է ընկնում մոնումենտալ բնույթով (յուրաքանչյուր սյուն ունի 20 մ բարձրություն, 3,5 մ տրամագիծ և զբաղեցնում է 100 մ x 150 մ տարածք): Տաճարի նախամուտքի առջև շուրջ 2 կմ ձգվում է մ. թ. ա. II հազարամյակում կառուցված խոյակառափ սֆինքսների շարքը, որոնք համարվում են հին Եգիպտոսի քարե արխիվները: Թե ինչ դեր է հատկացվել տաճարին, կարելի է հասկանալ այն փաստից, որ եգիպտական փարավոնները նույնիսկ պատերազմների և երկրի համար սոցիալական

[1] **Мифы народов мира** (энциклопедия), т. 1, М., 1987, ст. 426:

ծանր պայմանների դեպքում չեն դադարեցրել տաճարաշինությունը: Եգիպտագիտության մեջ իրավացիորեն նշվում է, որ «...բացահայտված հուշարձանները թույլ են տալիս հետևել քարե դարից մինչև պատմական ժամանակները ընթացող ժողովրդի զարգացմանը: Եվ միայն Եգիպտոսում է երևում այդ ուղին, որ հարթում է մարդը անապատի կոպիտ գերեզմաններից ու քարանձավներից մինչև շքեղ բուրգեր»[1]:

Եգիպտական կրոնի և մշակույթի կապը վկայող հաջորդ փաստը Եգիպտագիտության մեջ ընդունված այն համոզմունքն է, որ մարդկային ոչ մի քաղաքակրթության շրջանակներում մահվան հանդեպ բողոքը այդքան գունեղ, որոշակի, մանրամասն մշակված արարողակարգ և ավարտուն ձև չի ունեցել, ինչպես Եգիպտոսում: Եգիպտական դիցաբանական շերտերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Եգիպտոսում հոգեհանգստյան արարողություններն ու ծիսակատարությունները ոչ թե մահվան պաշտամունք էին, այլ հակառակը՝ դրանք մերժում, ժխտում էին կյանքի գեղեցկությունը խաթարող մահը: Այս առումով գերմանացի փիլիսոփա Հեգելը միանգամայն իրավացիորեն պնդում է, որ թաղման ծեսին նվիրված «հիմն-ձոներում» անգամ ոչ մի «զիջում չի կատարվում մահին», այլ, հակառակը, եգիպտական կրոնը առաջադրում և յուրովի լուծում է կյանքի ու մահվան հավիտենական հանելուկը: Հեղինակը եգիպտական դիցաբանական համակարգի համար հատկանշական էր համարում այն, որ նրանում կարևորվում է ամենազոր հոգևոր ուժերի հետ բնական երևույթների «հաղորդակցական կապը», բնության մարդակերպ ուժերի օգնությամբ «քաոսի ինքնակարգավորումը»[2]: Հատկանշական է մի փաստ ևս: Վերջավորի ու հավիտենականի փոխհարաբերության որոնումների ճանապարհին արդեն մ. թ. ա. IV հազարամյակում Եգիպտոսը դարձավ կյանքի իմաստի, ժամանակավորի և անժամանակայինի, մարդկային և աստվածային էությունների փոխհարաբերության կրոնական լուծման կենտրոնատեղին: Եվ ամենևին էլ զարմանալի չէր, որ այդ փոխառնչությունների լուծման հանգուցային օղակներից մեկը համարվեց մարդը, քանի որ այդ գաղտնիքների բացահայտման ճանապարհին միայն մարդու միտքը կարող էր տեսանելիից անցում

---

[1] **Морэ А.,** Во времена фараонов, М., 1998, ст. 123.

[2] Տե՛ս **Гегель Г. В. Ф.,** Лекции по филисофии религии / Гегель Г. В. Ф., Филисофия религии, в 2-х томах, т. 2, М., 1975, ст. 38-39:

կատարել անտեսանելիին, անցողիկից՝ հավերժականին:

Մահը կասեցնելու այդ անհաղթահարելի ձգտումը բնական էր, և հենց կյանքի բնականոն ընթացքի ազդեցությամբ էլ ձևավորվեց հետմահու կյանքի և հատուցման, ննջեցյալի հարության, Օսիրիսի ստորերկյա թագավորության մասին բարդ ուսմունքը: Դրա օրինաչափ արդյունքը դարձան «Բուրգերի արձանագրությունները», «Մեռելոց գիրքը» և «Սարկոֆագների արձանագրությունները», որոնք Եգիպտոսի հնագույն կրոնական ձեռագիր հուշարձաններն են: «Մեռելոց գրքից» մեջբերված տեքստերը (անեծքներ, հմայախոսություններ) հին եգիպտացիները փաթեթներով դնում էին ննջեցյալի հետ, քանզի հավատում էին, որ դրանք ննջեցյալը պետք է արտաբերեր նոր թագավորության մեջ, այլապես չէր կարողանա բարեհաջող անցնել Օսիրիսի դատարանով, չէր կարողանա արդարանալ և ազատվել 42 մեղքերից և անցում կատարել հավերժական կյանքի: Ըստ այդ նախնական պատկերացումների՝ այնկողմնային աշխարհը կենդանի Եգիպտոսի «պատճենն» է՝ միայն ավելի բարեբեր Նեղոսով ու դաշտերով: Այդ իսկ պատճառով էլ երկրագործական աշխատանքներից ազատվելու համար յուրաքանչյուր ննջեցյալի հետ դնում էին փոքրիկ արձանիկներ՝ **ուշեբտիներ** (պատասխանատուներ), որոնք էլ, ըստ եգիպտական դիցաբանական պատկերացումների, այնկողմնային աշխարհում ննջեցյալի փոխարեն պետք է կատարեին ամեն բան: Հուղարկավորության ժամանակ ննջեցյալի հետ արձանիկներ կամ պապիրուսներ դնելու սովորույթի չենք հանդիպում դիցաբանական համակարգ ունեցող որևէ այլ ժողովրդի մոտ: Հետաքրքրական է և այն պատկերացումը, ըստ որի՝ ուշեբտիները ոչ միայն ննջեցյալին նյութական ապահովություն և բարեհաջողություն էին խոստանում, այլ նաև մոգության ազդեցութեամբ այն աշխարհում պետք է վերածվեին կենդանի էակների: Այդ ամենից դժվար չէ եզրակացնել, որ բարձր քաղաքակրթությանը զուգահեռ Հին Եգիպտոսում երբեմն դրսևորում էր բավականին ցածր մտավոր մակարդակ: Դա բացատրվում է նրանով, որ Եգիպտոսում հավատալիքներն ու դիցաբանական մտածողությունը տիրապետող էին գրեթե բոլոր ոլորտներում և հենց իրենք էլ ընկած են արվեստների, գիտական մտքի զարգացման հիմքում: Դրանք են պայմանավորում նաև աշխարհակառույցի եգիպտական պատկերացումները, որոնք, լինելով որոշակի պատմական դարաշրջանի արդյունք, իրենց մեջ ներառում են մարդ-բնություն հարաբերության ողջ ծավալը, որի շրջանակներում աշխարհակառույցը ընկալվում է հասարակական կյանքի պայմանների համանմա-

նությամբ[1]:

Այդ պատկերացումների բնականոն զարգացման հետևանքով արդեն մ. թ. ա. III հազարամյակում ի հայտ են գալիս դամբարանների պատերին գրվող «հուղարկավորության արձանագրությունները»: Այդ արձանագրություններն անհամար պապիրուսներ են, որոնց ամբողջությունը պատմությանը հայտնի է «Մեռելոց գիրք» անվամբ: «Բուրգերի արձանագրությունների» հավաքական առաջին ժողովածուն բաղկացած է 453 գլխից: Այդ գրքի մեկական օրինակ «ուղեկցում էր» յուրաքանչյուր ննջեցյալի: Տարածված էր այն համոզմունքը, որ «Մեռելոց գիրքը» գերեզմանում անգամ մարդուն կարող էր փրկել մահից, ապահովել նրա հետագա կյանքը, սակայն դրանում ոչինչ չէր ասվում «հավիտենական երանության» (դրախտ) հասնելու իսկական միջոցների, ինչպես նաև ահեղ դատաստանի փորձությունները հաղթահարելու ուղիների մասին:

«Մեռելոց գրքի» գլուխներում ընդգրկված են նաև բազմաթիվ գործնական խորհուրդներ, և յուրաքանչյուր ոք, ով կենդանության օրոք կծանոթանար մոգական այդ բանաձևերին, մահվանից հետո վախենալու ոչինչ չէր ունենա:

«Մեռելոց գիրքը» կոչված էր բավարարելու ոչ միայն կրոնական պահանջմունքները, այլև պատասխան տալու այն հարցին, թե որտեղից է գալիս և դեպի ուր է գնում մարդը: Այս գիրքը փորձում է տալ այդ մեծագույն հարցի պատասխանը, և այն «տրվում է» միայն մահացածներին: Ըստ այդ գրքի՝ մարդու ծագման հիմք է համարվում աստվածային էությունը, ճիշտ այնպես, ինչպես աստվածներն են սերում **Ռա**-ից: Արարչագործության ժամանակ նա՝ մարդը, արցունքի նման հոսել է արարչի աչքերից, իսկ աստվածները դուրս են եկել նրա բերանից: Եվ այն հանգուցյալը, որի առջև բացվում է այս գաղտնիքը, ճանաչում է իր իսկական էությունը: Իսկ տիեզերքը համարվում է աստվածային հոգու ստվեր: Այս առումով չափազանց հետաքրքրական է «Մեռելոց գրքի» վերջաբանը՝ «Մահը մարդուն վերադարձնում է աստվածային երկիր, այնտեղ, որտեղից նա վռնդվել էր իր երկրային կյանքի ժամանակ»: Քաղաքակրթության և դիցաբանության պատմության ուսումնասիրության բնագավառում մեծ արժեք է ներկայացնում նաև մոտ 4000 տարվա հնություն ունեցող եգիպտական մի այլ պապիրուս, որը հայտնի է «Վախճանվածի

[1] Տե՛ս **Гегель Г. В. Ф.,** Лекции по филисофии религии, т. 2, ст. 36:

զրույցն իր հոգու հետ» անվամբ: Նրանում փաստարկվում է մահվան գերադասությունը և փորձ է կատարվում հիմնավորելու, թե իբր կյանքն ինքը չարիք է, եղբայրները չար են, ընկերները ոչ ոքի չեն սիրում, հոգիները դաժան են: Խեղճը կործանվում է, ուժեղը՝ հաղթում: Իսկ երկիրը պատկանում է մեղսագործներին: Երկրային այդ մռայլ կյանքի կողքին էլ գովերգվում է մահը, որը որակվում է իբրև հիվանդության բուժման միակ միջոց: Ինչպես թարմ օդն է ներգործում տենդից այրվող հիվանդի վրա, այդպես էլ մահն է փրկություն դառնում և նույնացվում է լոտոսի բուրմունքի և երկար տարիների գերությունից հետո տուն վերադարձող ծովագնացի բերկրանքի հետ: Եգիպտական մի այլ գրավոր հուշարձան, որը հայտնի է «Տավողահարի երգը» անվամբ, նույնպես տարածում և հիմնավորում է անկումային, սկեպտիկ տրամադրություններ: Նրանում մեծ տեղ է հատկացվում հետմահու կյանքի հանդեպ կասկածի հիմնավորմանն ու հավատի կորստին, սակայն այդ կասկածը վերաբերում էր ոչ թե կրոնին, այլ մեռածների պաշտամունքին[1]: Այնուհետև «Երգը» փորձում է հիմնավորել, որ անհրաժեշտ է հրաժարվել հետմահու կյանքի գովերգությունից և շրջվել դեպի երկրային կյանք, քանի որ «Ոչ ոք դեռևս այնտեղից չի վերադարձել, որ պարզվի, թե այնտեղ ինչպես են ապրում, և ինչի կարիք կա»: Նրանում կոչ է արվում փարատելու մահվան երկյուղը, ինչպես նաև ընդգծվում են բարու և արդարության գաղափարները: «Տրվի՛ր քո ցանկություններին, քանի դեռ կենդանի ես, բազմապատկի՛ր քո հաճույքները, մի՛ տրվիր ունայնության, ոչ ոք իր ունեցվածքն իր հետ չի տանում».- սա է «Տավղահարի երգի» հանրագումարային եզրակացությունը:

Եգիպտական տաճարներում, պաշտամունքային արարողություններից բացի, ուսումնասիրվում էին գիտությունները՝ մաթեմատիկա, աստղագիտություն, ֆիզիկա, բժշկություն, պատմություն: Կրոնական մտածողությունը սերտ առնչության մեջ էր գիտության հետ և հենց այդ կապի միջոցով էլ հասարակական կյանքում ձեռք է բերում առավել ազդեցիկ դեր ու նշանակություն:

Արվեստը ևս ձգտում էր իր նուրբ, գեղարվեստական արտահայտչամիջոցներով, ալեգորիկ պատկերներով ցույց տալ աստվածային և տիեզերական ուժերի փոխհարաբերությունները: Այս առումով մեծ ներգոր-

---

[1] Այս մասին մանրամասն տե՛ս **Коростовцев М. А.,** Религия древнего Египта, М., 1976, ст. 263:

ծուն ուժով էին հագեցած միստերիաները, որոնք էմոցիոնալ խոր ազդեցություն էին թողնում մարդկանց երևակայության, խղճի և հոգու վրա: Ժողովուրդը առանձնահատուկ կրոնական հուզավառությամբ ու հափշշտակվածությամբ էր մասնակցում նման հանդիսություններին և խորհրդավոր ծիսակատարություններին: Միստերիաները յուրահատուկ կրոնական կատարսիսի (մաքրագործության) դեր էին կատարում: Իբրև հասարակական-հոգեբանական մեխանիզմ՝ դրանք փարատում, մխիթարում, մաքրում էին մարդու միտքն ու հոգին, նրա գիտակցության խորքերում ամրացնում էին լավատեսությունը, հոգու անմահություն ձեռք բերելու վստահությունը՝ իբրև հատուցում երկրային կյանքում կրած տառապանքների ու անարդարությունների: Եգիպտական կրոնն իր պոլիթեիզմով, մոգությունն իր գունեղ միստերիաներով անմիջականորեն ազդում էին մարդկանց հոգիների վրա՝ բավարարվածություն տալով նրանց կրոնական զգացմունքներին և պահանջմունքներին:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ-ՄՇԱԿՈՒՅԹ ԿԱՊԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գոհար Սարգսյան

Բանալի բառեր՝ *պոլիթեիզմ, թեոգոնիա, կոսմոգոնիա, «Կա-Բա», «Մեռելոց գիրք», միստերիա, կատարսիս, ֆետիշիզմ, տոտեմիզմ, մոգություն*

Հոդվածում քննության է առնվում եգիպտական մշակույթի և կրոնական պատկերացումների ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, այն կապերն ու փոխհարաբերությունները, որոնք առկա են դիցաբանական մտածողության և դրա արտացոլումը հանդիսացող մշակութային արժեքների միջև: Կրոնադիցաբանական պատկերացումները ոչ միայն ազդեցություն են ունեցել արվեստի գրեթե բոլոր ճյուղերի, նաև գիտության զարգացման վրա, այլև իրենց մարմնավորումն են ստացել դրանց միջոցով: Եգիպտական ճարտարապետության անօրինակ նմուշ հանդիսացող բուրգերը հանդերձյալ կյանքի վերաբերյալ խոր հավատքի արտացոլումն են: Եգիպտացիների հավատքային պատկերացումները ընկած են և՛ ճարտարապետության, և՛ քանդակագործության, և՛ նկարչության, և՛ անգամ բժշկության հիմքում: Դիցաբանությունը դառնում է մշակութային ու կենցաղային երևույթները ուսումնասիրելու և բացատրելու պատմական աղբյուր, վաղնջական ժամանակների հասարակական կյանքի այլաբանական արտացոլում:

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ВЗАИМОСВЯЗЕЙ МЕЖДУ ЕГИПЕТСКИМИ МИФОЛОГИЕЙ-КУЛЬТУРОЙ

Гоар Саргсян

Ключевые слова: *политеизм, теогония, космогония, “Ка-Ба”, “Книга Мертвых”, мистерия, катарсис, фетишизм, тотемизм, магия*

В статье анализируются особенности формирования и развития египетской культуры и религиозных представлений, связи и взаимоотношения, которые имеются между мифологическим мышлением и, как выражение последнего, культурными ценностями. Религиозно-мифологические представления не только оказали большое влияние почти на все направления искусства и развитие науки, но и воплощались ими. Единственные в своем роде памятники египетской архитектуры, пирамиды, – отражение глубокой веры в загробную жизнь. Архитектура, скульптура, живопись, и даже медицина египтян находятся в самой тесной зависимости от их религиозных представлений. Мифология становится историческим источником для рассмотрения и объяснения культурных и бытовых явлений, аллегорическим отражением общественной жизни древних времен.

SOME FEATURES OF THE EGYPTIAN MYTHOLOGY-CULTURE CONNECTION

Gohar Sargsyan

Key words: *polytheism, tacosity, cosmogony, "Ka-Ba", "Book of the Dead", mystery, catharsis, fethishism, totalismism, magic*

The article discusses the features of the formation and development of Egyptian culture and religious thinking, connections and relationships that exist between the mythological thinking and cultural values in which it exists. Religious and mythological ideas influenced not only all branches of art, but also the development of science, but also their implementation through them. The pyramids, a unique example of Egyptian architecture, are a reflection of a deep faith in the afterlife. The Egyptian beliefs are penetrated on architecture, sculpture, painting, and even medicine basis. Mythology becomes a historical source of study and explanation of cultural and everyday phenomena, a parody of the social life of the ancient times.